

«ԵՐԵՎԱՆԻ» ԲԵՐԴԻ ՀՆԱԴՈՒՅՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ*

Գ. Վ. ԱՐԳԱՐՅԱՆ

Բաճախի բաժանում գիտությունների դեկտոր

Երևանի բերդի մասին վկայող հնագույն տեղեկությունը համարվում է 642—643 թթ. ընթացքում Հայաստան արշաված արաբների վերաբերյալ Սեբեոսի «Պատմության» մեջ պահպանված հետևյալ հիշատակությունը. «Եկին ժողովեցան ի յԵրևան, և մարտեան ընդ բերդին և ոչ կաբացին առնուլս¹։ Այս աղբյուրի վրա են հենվել իրենց ուսումնասիրություններում մի շարք մասնագետներ, սկսած՝ տեղեկության առաջին բացահայտող և հրատարակիչ Հ. Շահխաթունյանից² մինչև հին Հայաստանի բերդերին նվիրված ամենանոր մենագրության հեղինակ Մ. Վ. Հովհաննիսյանը³։

Քննարկվող հատվածում, սակայն, Երևանի հիշատակությունը կասկած է հարուցում, ուստի Շահխաթունյանը հատվածը վկայակոչելով հանդերձ՝ միաժամանակ դրել է այն պայմանը, թե «չգուցէ այլ Երևան անուամբ բերդ կամ ամրոց ի Կոգովիտ գաւառի կամ ի մոտակայս նորա»⁴։

Ավելի լուրջ կասկած է հայտնել Թ. Ավդալբեգյանը՝ նա դրում է. «Այս հատվածում... զարմանալի է Երևանի հիշատակությունը Արաբ զորքերը գալիս են «ի Սեփհական գնդին կողմանս» և այստեղ հանկարծ... «ժողովեցան ի յԵրևան և մարտեան ընդ բերդին»։ Ո՛րտեղից որտեղ, ինչ էլ որ ընդունենք կողմն Սեփհական գնդին՝ Մարդաստան, թե Վասպուրական, համենայնդեպս ո՛չ առաջնում ու ո՛չ էլ երկրորդում Երևան անունով վայր չկա ու չի եղել»⁵։

Թ. Ավդալբեգյանը Երևանի անվան հիշատակության վրա կասկածել է նաև այն պատճառով, որ Երևանը գտնվում է Կոգովիտի հյուսիսում, այնինչ՝ քննարկվող հատվածում հիշատակված «յԵրևանը», ըստ Թ. Ավդալբեգյանի ճիշտ հաշվումների, պետք է գտնվեր Կոգովիտից հարավ։

Այս՝ հարավում գտնված «յԵրևանը» Թ. Ավդալբեգյանը նույնացրել է Առեստավանի հետ՝ ելնելով այն փաստից, որ նախորդ արշավանքի ժամանակ արաբներն անցել են Առեստավանի մոտով, այսինքն՝ Բերկրիի ձորով։ Նա գրում է. «Երկու դեպքում էլ զորաշարժի գիծն անցնում է հարավից հյուսիս։ Գծի մի ծայրում՝ հյուսիսում, Արծափն է, Կոգովիտը, միջին հանգույցը Որդսպուն է, իսկ հարավային սկզբնակետը Բերկրի ձորը կամ մի այլ մոտիկ

* Հոդվածը տպագրվում է մտքերի փոխանակության կարգով։

¹ Ս ե ռ է ո ս ի ե պ ի ս կ ո պ ո ս ի Պատմութիւն, չորրորդ տպագրութիւն, բաղդատութեամբ ձեռագրաց, հանդերձ առաջաբանիւ եւ ծանօթութեամբք ի ձեռն Ս տ. Մ ա լ ի ս ս ե ա ն ց, Երևան, 1939, էջ 118։ (Այսուհետեւ՝ ՍԵՊ)։

² Հ. Շ ա հ խ ա թ ու ն յ ա ն, Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացի Արարատայ, հ. Բ, էջմիածին, 1842, էջ 134։

³ Մ. Վ. Հ ո Վ հ ա ն ն ի ս յ ա ն, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 840, 890—901։

⁴ Հ. Շ ա հ խ ա թ ու ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 134։

⁵ Թ. Ա Վ դ ա լ բ ե գ յ ա ն, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1960, էջ 140։

վայր այս շրջանում: Ո՞րն է այս մոտիկ վայրը: Մեր կարծիքով՝ հայտնի Առեստը կամ Առեստ ավանը, որը միասին Առեստաւան էլ է դրվում»⁶:

Սակայն պետք է նկատել, որ նախորդ արշավանքի ժամանակ արաբներն Առեստավանի մոտով էին անցել, ռովմեա ելակետ էին ունեցել Ասորական Միջագետքը, որտեղից դեպի Որդսպու-Արծափ ձգվող ճանապարհն իր վերջին կայաններում անցնում էր իսկապես Բերկրիի ձորով (Առեստավանի մոտով): Իսկ այժմ արաբների ելակետը Ատրպատականն էր («Եկն զարքն Իսմայելի յԱտրպատական և ռաժանեցան յերիս»), որը գտնվում էր Ասորական Միջագետքից առնվազն հարյուր կիլոմետր հեռու, դեպի Երևան, հետևաբար Ատրպատականից Որդսպու ձգվող ուղին պետք է անցներ բոլորովին այլ ճանապարհով: Այն անպայման լինելու էր Ուրմիո լճի շրջակայքում գտնվող մի ճանապարհ, որովհետև VII դ. Ուրմիո Հայաստանի և Ատրպատականի միջև ընկած սահմանային լին էր, ինչ վերաբերում է Որդսպուի՝ միջին հանգույց լինելու փաստին՝ ապա Մանանդյանն արդեն գրել է. «Թեև... միջին հանգույցը երկու դեպքում էլ Որդսպուն է, սակայն այս զուգադրյալումը բացատրվում է... նրանով, որ Որդսպուն գտնվել է թե՛ Բերկրիի ձորից և թե՛ Խոյից Կոգովիտ տանող ճանապարհագծերի միացման շրջանում»⁷:

Այսպիսով՝ Թ. Ավդալբեգյանը ճիշտ կռահելով հանդերձ «Երևան» անվան սրբազրույթյան անհրաժեշտությունը, դժբախտաբար, չի դտել այն ճշգրիտ վայրը, որը հիշատակված է եղել Սեբեոսի «Պատմության» նախնական բնագրում:

Այդ տեղը գտնելու առաջին պատիվը պատկանում է Հ. Մանանդյանին: Նա հաստատում է Թ. Ավդալբեգյանի այն միտքը, որ «Երևան» անունը ենթակա է սրբագրման և այդ անվան փոխարեն առաջարկում է «Հեբաւան», նկատի ունենալով Հեր քաղաքի անունը⁸:

Սակայն Հ. Մանանդյանի կռահումը նույնպես բավարար չափով չի հիմնավորվել և հանդիպել է մասնագետների առարկությանը: Երևանի ամբողջական պատմության հեղինակ Թ. Հակոբյանը մանրամասն հավաքել է Հեր քաղաքի անվան հիշատակության բազմաթիվ օրինակներ հայ և օտար մատենագիրների երկերում և ապացուցել, որ այդ քաղաքը երբեք չի կոչվել Մանանդյանի նշած «Հեբաւան» ձևով⁹:

Իրականությանը չի համապատասխանում Հ. Մանանդյանի նաև այն պատճառաբանությունը, թե արաբական զորքերը Ատրպատականից եկել են Բեմիջագետք «Հեր կամ այժմյան Խոյ և այդտեղից Պատինգերյան քարտեզի կարճ ու ուղիղ գծով և Որդսպու—Catispi-ի մոտով դեպի Արծափ»¹⁰: Սա հակասում է հենց իր՝ Մանանդյանի այն եզրակացությանը, թե «միանգամայն բնական ու հասկանալի է, որ ցրված զորախմբերը չէին կարող շարունակել արշավանքը, ունենալով իրենց հետ ավար և գերիներ, այլ նրանք ետ էին դառնալու նոսրից և հավաքվելու որոշ կենտրոնավայրում: «Եւ եկին ժողովե-

6 Թ. Ավդալբեգյան, նշվ. աշխ., էջ 146:

7 Հ. Մանանդյան, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհներն ըստ Պատինգերյան քարտեզի, Երևան, 1936, էջ 146:

8 Նույն տեղում:

9 Թ. Հակոբյան, Երևանի պատմությունը, հ. I, Երևան, 1969, էջ 195:

10 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 145:

ցան,— ասում է Սեբեոսը,— ի յերևան (ըստ Մանանդյանի՝ «Հերաւան» — Գ. Ա.), և մարտեան ընդ բերդին, և ոչ կարացին առնուլ»¹¹, ինչպես տեսնում ենք. Ն. Մանանդյանը սկզբում գտնում էր, որ արաբները Հայաստան են մտել Հերոսի, իսկ այժմ ասում է, որ նրանք Հայաստանն ասպատակելուց հետո կրկին վերադարձել են Հերոսի Սահավանական չէ, որովհետև Սեբեոսը ոչ մի խոսք չունի արաբների երկու անգամ Հերոսի գտնված լինելու մասին:

Ն. Մանանդյանի աշխատությունում կարդում ենք հետևյալ տեղեկությունը. «Արաբական զորքերը, որոնք Ատրպատականից և այժմյան Խոյի շերտից արշավել էին Սեփհական գնդի կողմերը, վերադառնալով նորից Խոյ — «Հերաւան», գնացած պիտի լինեին այնուհետև ոչ թե սրի ու ավերածության մատնված Սեփհական գնդի միկնույն ջրջանները, այլ՝ հավանորեն, կարճ ու ուղիղ գծով դեպի Որդսպու, որը գտնվել է, ինչպես կտեսնենք, Կոզովիտ գավառի հարավում»:

Այս հայտարարության համաձայն արաբները Որդսպու են գնացել երկրորդ անգամ Հերոսի հավաքվելուց հետո, այսինքն՝ առաջին անգամ իջել են Հերից հարավ, ապա երկրորդ անգամ վերադարձել են Հեր և միայն դրանից հետո են գնացել Որդսպու: Այնինչ, ինչպես տեսանք, Մանանդյանը հայտնում է, որ արաբները Որդսպու են գնացել հենց սկզբից:

Այսպիսով՝ Մանանդյանին նույնպես չի հաջողվել ապացուցել իր տեսակետը:

Մանանդյանի և Ավդալբեգյանի կարծիքները քննված են Թ. Հակոբյանի «Երևանի պատմության» մեջ, որտեղ, ինչպես ասվեց, ներկայացված են «Հերավան» տեղանունը ժխտող բազմաթիվ մատենագրական վկայություններ: Սակայն նույնչափ առարկայական չէ Երևանի պատմության վաստակաշատ մասնագետի հետևյալ առարկությունը. «Ատրպատականից Վասպուրական տանող առևտրա-տնտեսական ու ռազմական ամենակարևոր ճանապարհի առաջին կայանը Հայաստանի սահմանագլխին Հերն էր: Սասանյաններն իրենց արշավանքներն այս կողմերով կատարելիս Հայաստան էին մուտք գործում Հեր և Զարևանդ գավառներով: Իսկ այդ գալիս է ժխտելու և՛ Թ. Ավդալբեգյանի այն ենթադրությունը, թե Վասպուրականում Սեբեոսի հիշատակած արաբական զորագնդի ելման կետը Առեստավանն էր, և՛ Ն. Մանանդյանի այն կարծիքը, թե նույն զորախումբը Վասպուրականում ավարառուական արշավանքներ կատարելուց հետո է միայն եկել Հեր (նրա մոտ «Հերավան»)»¹², Առաջապետ է ասել, որ ինքը Մանանդյանն էր առաջին հեղինակն այն տեսակետի, որ արաբները Հայաստան են մուտք գործել հենց Ատրպատականից Վասպուրական տանող առևտրա-տնտեսական ու ռազմական ամենակարևոր ճանապարհի առաջին կայանը հանդիսացող Հերով¹³:

Թ. Հակոբյանը Թ. Ավդալբեգյանին առարկելիս նույնպես վկայակոչել է այն միկնույն փաստը, թե Հերը Ատրպատականից դեպի Հայաստան տանող առաջին կարևոր կայանն էր, ուստի արաբներն առաջին անգամ եղել են ոչ թե Առեստավանում, այլ Հերում: Իրականում, սակայն, Հերը Հայաստան տանող միակ ճանապարհը չէր. Մանանդյանը ցույց է տվել Ատրպատականից

¹¹ Նույն տեղում:

¹² Թ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 195:

¹³ Հմմտ. Ն. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 145, 146:

դեպի Հայաստան տանող նաև այնպիսի ճանապարհներ, որոնց առաջին կայանը Հերը չէ¹⁴։ Բավական է, որ արաբները Գանձակ Ատրպատականից շարժվեին դեպի Ուրմիա քաղաքը (Ուրմիո լճի հարավ-արևմտյան կողմերով) այլևս պարտադիր չէր դառնա անպայման մինչև Հեր հասնելը։ Ուրմիայից արարները կթեքվեին դեպի Վասպուրականի հարավային գավառները, այնտեղից դեպի Առեստավան բարձրանալու, որից հետո միայն Հեր գնալու (Ատրպատական վերադառնալու) պայմանով։

Տեսանք, որ Թ. Ավդալբեգյանը արաբների ղորաշարժերի ուղին որոշել է հարավից դեպի հյուսիս, հենվելով բնակավայրերի (Որդսպու-Արծափ) թրվարկման հաջորդականությունից վրա։ Հ. Մանանդյանը նույնպես հենվել է այս ճիշտ թվարկման վրա։ Սակայն Թ. Հակոբյանը գտնում է, որ ապատմիչը կարող էր արշավանքը նկարագրելիս խախտել հարձակման ենթակա բնակավայրերի թվարկման հաջորդականությունը, ինչպես այդ կարելի է նկատել ուրիշ պատմիչների ու մատենագիրների մոտ»¹⁵։ Սա ավելի համոզիչ առարկություն կլիներ, եթե Թ. Ավդալբեգյանի վկայակոչած բնակավայրերը իրականում չհամապատասխանեին հարավից հյուսիս տանող ուղղությանը։ Բայց քանի որ այդ վայրերն իրենց աշխարհագրական դիրքով նույնպես համապատասխանում են Սեբեոսի թվարկած հաջորդականությունը՝ կնշանակի արաբների ղորաշարժն ընթացել է բնակավայրերի այն միևնույն հաջորդականությամբ (Որդսպու-Արծափ), որը նշել է Ավդալբեգյանը։

«Երևան» ընթերցվածքը պաշտպանել է նաև Մ. Վ. Հովհաննիսյանը, որը գրում է. «Ըստ մեղի՝ հողվածագրին (նկատի ունի Թ. Ավդալբեգյանին— Գ. Ա.) գլխավոր վրիպումը հոն է, որ Սեպհական գունդին կողմը մի միայն Վասպուրականի համար կը հասկընայ։ Այդպիսի պահանջ մը չկա Սեբեոսի բնագրին մեջ։ Սեպհական գունդին կողմը պետք է հասկնալ Դուինի և շրջակայքի համար, ուր էր արաբական զինուորական և վարչական ուժերուն կեդրոնը... Արդ՝ շատ ավելի բնական է և աշխարհագրական ու ռազմագիտական պահանջին ալ համաձայն, որ բնագրին տված Երեւան-ը մնա իր տեղը և նկատվի թիրախը Սեպհական գունդին կամ Դուինի զինվորական գոտիին, քան Բզնունեաց ծովու արևմտյան փըր հանգչող Առեստավանը, որ շատ հեռու կմնա գիծեն»¹⁶։ Այստեղ մեր հիմնական առարկությունը վերաբերում է Սեպհական գնդի կողմերին։ Հարգարժան հեղինակը Սեպհական գնդի կողմերը նույնացրել է Դվինի ու շրջակայքի հետ, բայց Սեբեոսն ինքը ժխտում է այդ նույնացման հնարավորությունը, որովհետև նա Դվինը համարում է Այրարատյան նահանգում գտնվող վայր՝ «Դուին Այրարատեան»¹⁷, իսկ Այրարատյան նահանգը նա որոշակիորեն անջատում է Սեպհական գնդի կողմերից (առաջ մի Այրարատ, և առաջ մի ի Սեպհական գնդին կողմանս)»¹⁸։

Միջնադարյան պատմիչներից՝ VII դ. կատարված իրադարձությունների կապակցությամբ Երևանի անունը հիշատակում են նաև Հովհաննես Դրասխանակերտցին և Սամվել Անեցին։ Սակայն այս պատմիչների հաղորդումների

14 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, Բ յա-սի նյութեր, Երևան, 1960, էջ 331, 333, քարտեզներ։

15 Թ. Հակոբյան, Նշվ. աշխ., էջ 193։

16 Մ. Վ. Հովհաննիսյան, Նշվ. աշխ., էջ 900—901։

17 Սեղ, էջ 93, հմտ. նաև էջ 74, 143 և այլուր։

18 Նույն տեղում, էջ 118։

հիման վրա որևէ հաստատ եզրակացություն հանգել չենք կարող, որովհետև նրանց հաղորդածի կապը Սեբեոսի հետ հարցական է: Բացի այդ՝ Դրասխանակերտցին և Անեցին հայտնում են, որ իրենք օդավել են նախորդ պատմիչներից, այնինչ՝ մեզ հայտնի չեն այս երկու մատենագիրներին առաջ ապրած այնպիսի պատմիչներ, որոնք պատմած լինեին Երևանի կովի մասին:

Կարծեցյալ Շապուհ Բագրատունու հրատարակիչները գտնում են, որ Սամվել Անեցին պարզապես կրկնել է Դրասխանակերտցուն և ինքն էլ իրենից ավելացրել է Ասողիկի և Շապուհ Բագրատունու անունները որպես Երևանի կովի մասին հաղորդող պատմիչների անուններ¹⁹: Այս ենթադրությունը, սակայն, կարող է և չհաստատվել, որովհետև Անեցին քաջ գիտեր, որ Ասողիկը ապրել է Դրասխանակերտցուց հետո, հետևաբար չէր կարող նրան հիշատակել որպես Դրասխանակերտցուց առաջ Երևանի մասին հայտնած պատմիչի:

Այսպիսով՝ Դրասխանակերտցու և Սամվել Անեցու վկայություններն որևէ վճռական դեր չեն կարող խաղալ Սեբեոսի «Պատմություն» մեջ հիշատակված «յժրեան» տեղանունը հաստատելու կամ մերժելու գործում: Միակ աղբյուրը դարձյալ մնում է Սեբեոսն՝ ինքր, որի գրքի սահմաններում էլ պետք է լուծել հարցը:

Նա գրում է. «Եւ եղև ի գալ միւս ամի եկն զաւրն Իսմայելի յԱտրպատական, և բաժանեցան յերիս: Առաջ մի յԱյրարատ, և առաջ մի ի Սեպհական գնդին կողմանսն, և առաջ մի յԱղուանս: Արդ՝ որք ի կողմանս Սեպհական գնդին՝ արշաւեալ սփռեցան և հարեալ զամենայն կողմանսն զայնոսիկ սրով սուսերի, առին զաւար և զգերութիւն: Եւ եկին ժողովեցան ի յժրեան, և մարտեան ընդ բերդին, և ոչ կարացին առնուլ»²⁰:

Ինչպես տեսնում ենք, «յժրեան» կոչված բերդը գրավելու համար մարտեր է մղել Սեպհական գնդի կողմերը գնացած զորախումբը: Ուրեմն այդ բերդը գտնվում է Սեպհական գնդի կողմերում, այնինչ՝ մեզ ծանոթ Երևանը գտնվում էր Այրարատյան նահանգում:

Եթե արաբներն Այրարատյան նահանգը գրավելու համար առաջին զորք ուղարկած շիհնեին՝ հարցի լուծումը կդժվարանար, որովհետև բոլորովին բացառված չէր լինի այն հնարավորությունը, որ Սեպհական գնդի կողմերն ուղարկված զորքերը թափանցեին նաև Այրարատյան նահանգ և գրավեին Երևանը, բայց քանի որ Սեբեոսը բացահայտ հայտարարում է, որ Այրարատյան նահանգն էին գնացել հատուկ Այրարատյան զորքերը, իսկ Երևանն էլ գտնվում էր Այրարատյան նահանգի բուն կենտրոնում, ուրեմն ավելի սպասելի է, որ Երևանը գրավեին Այրարատյան երկիր գնացած զորքերը:

Սեպհական գնդի կողմերում գտնված զորքերը պարտություն պարտության ետևից կրելով՝ հարկադրված են եղել շարժվել դեպի Արծափ, հավանաբար, Այրարատյան զորքերից օգնություն ստանալու ակնկալությամբ: Բայց այստեղ նրանք վերջնականապես ջարդվեցին: Արծափը գտնվում էր Այրարատյան նահանգի հարավային սահման Կոզովիտ գավառում և որպես սահմանամերձ վայր կարող էր միշտ էլ ենթարկվել հարևան վայրերում ծավալ-

¹⁹ Տե՛ս Պատմութիւն Շապահոյ Բագրատունւոյ, ի լոյս ածին Գ. Տեր-Սկրաչեան և Մեօրոպ եպիսկոպոս, էջմիածին, 1921, էջ 5—6:

²⁰ ՍԷՊ, էջ 118:

ված գործողություններին, Ուստի՝ Սեպհական գնդի կողմում գործած զորքերի Արծափում գտնված լինելու փաստը չպետք է շփոթվի Այրարատյան նահանգի բուն կենտրոնում գտնված Երեան թափանցելու հնարավորության հետ:

Արաբական նախորդ արշավանքի կապակցությամբ Սեբեոսը գրում է. «Եւ Լւ դաւր ապականիչ յԱսորեստան կողմանէ ընդ ճանապարհս Զորոյ յաշխարհն Տարօնոյ, առին զնա և զԲզնունիս և զԱղիովիտ: Եւ ճանապարհ կալեալ ի Բերկրոյ ձորն ընդ Որդսպոյ և ընդ Գոգովիտ՝ թափեցան յԱյրարատ»²¹, ինչպես տեսնում ենք, սույն հատվածում հիշատակված են ինը վայրեր՝ Ասորեստան-Զոր-Տարոն-Բզնունիք-Աղիովիտ-Բերկրո ձոր-Որդսպու-Վոգովիտ-Այրարատ: Եթե այս վայրերը տեղագրենք քարտեզի վրա՝ կտեսնենք, որ Սեբեոսը հիանալի ճշգրտությամբ իմացել է իր նշած վայրերի աշխարհագրական դիրքը և նշել հարավից աստիճանաբար միմյանց հաջորդող և դեպի հյուսիս ձգվող ինը վայրեր, Ինչից ոչ մեկը սխալ չէ: Սա հաստատ հիմք է տալիս մտածելու, որ Սեբեոսը քաջ ծանոթ է իր նշած վայրերի տեղագրությանը և վայրերը թվարկում է խիստ հերթականությամբ: Արդ՝ ինը վայրերի թվարկությունից հաստատ գիտենք, որ Որդսպուն գտնվում է Կոգովիտի հարավում, հետևաբար՝ երբ Սեբեոսը հայտնում է, որ Ատրպատականից, այսինքն՝ հարավից եկած արաբները եղել են նախ «Երեանում», ապա նոր են գնացել դեպի Կոգովիտ՝ (Որդսպու, Արծափ) կնշանակի դրանով հավաստում է, որ «Երեանում» գտնվում է Կոգովիտից հարավ, Իսկ սա իր հերթին դարձյալ հաստատում է Բ. Ավդալրեգյանի նկատած ալն իրողությունը, որ Սեբեոսի նշած վայրը («Երեան»-ը) պետք է որոնել ոչ թե այսօրվա Երեանում, այլ՝ սլատական Կոգովիտից հարավ գտնված մի վայրում: Այդ վայրը Հերն էր:

Հեր քաղաքն էր իսկապես այն հարմար տեղը, որտեղ արաբները պետք է հավաքեին և պահեին Վասպուրականում իրենց ձեռք բերած ավարը և գերիներին, մինչև որ կրկին կվերադառնային իրենց ելակետը՝ Ատրպատական: Ասվեց, որ Հերը Հայաստանից Ատրպատական տանող ճանապարհի գլխավոր կայաններից էր²², որտեղից արաբները կկարողանային կրկին վերադառնալ Ատրպատական: Դրա համար էլ նրանք Վասպուրականի հարավային գավառները ասպատակելուց հետո կարող էին հավաքվել Հերում:

Այն մասնագետները, որոնք կարծել են, թե արաբները Հայաստան են մտել առաջին անգամ հենց Հերից (և ոչ թե՝ Հեր են եկել Սեպհական գնդի կողմերն ասպատակելուց հետո), չեն նկատել այն փաստը, որ Սեբեոսն ինքը հայտնում է, թե «Երեանը» (Հերը) արաբների ոչ թե առաջին, այլ՝ ընթացիկ կայաններից մեկն էր: «Որք ի կողմանս Սեպհական գնդին»,— գրում է Սեբեոսը,— արշաւեալ սփռեցան և հարեալ զամենայն կողմանս զայնոսիկ սրով սուսերի, առին զաւար և զգերութիւն: Եւ եկին ժողովեցան ի Երեան»²³:

Պարզ ասված է, որ արաբները «Երեանում» (Հերում) ժողովվել են միայն այն բանից հետո, երբ արդեն սփռվել և սրի էին մատնել զամենայն կողմանս զայնոսիկ: Կնշանակի նրանք Վասպուրական էին մտել ոչ թե Հերից, այլ՝ հարավից:

²¹ ՈՅՊ, էջ 109:

²² Հմմտ. Հ. Մանանդյան, Փնական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր Բ, Բ մասի նյութեր, Երևան, 1960, էջ 146:

²³ ՍՅՊ, 116:

Այժմ տեսնենք, թե ինչպես կարող էր «Սեբեոսի Պատմության» նախնական բնագրում գտնված «Հեր» անունը դառնալ «Երեւան»: Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում են մեզ հետաքրքրող հատվածը պարունակող յոթ ընդօրինակություն: Նրանցից վեցը պահվում են ձեռագրական հավաքածուների, մեկը՝ դիվանական վավերագրերի բաժիններում: Վեցից հինգը ձեռագրեր են (№№ 2639, 2867, 2935, 3122, 6454), մեկը՝ ձեռագրական պատուհիկ (№ 1343), յոթերորդը՝ դիվանական վավերագիր (Երեցյանի արխիվ, թղթ. 153, վավ. 124):

Նշվածներից հնագույնը № 1343 ձեռագրական պատուհիկն է, որը պոկված է XVI դ. գրված և անհետ կորած մի ձեռագրից: Այստեղ «Երեւան»-ի փոխարեն գրված է «Հէրեւան»: Հաջորդը՝ № 2639 ձեռագիրն է, որն ընդօրինակված է 1672 թ. և դարձյալ ունի «Հէրեւան» ընթերցվածքը: Մյուս բոլոր ընդօրինակությունները կատարված են անցյալ դարում՝ 1842-ից հետո և բոլորը (բացի № 3122 ձեռագրից) ունեն «ի Երեւան»: Այսպիսով՝ «Հէրեւանի» հետեւեւրը կորել և՛ անցյալ դարում:

Բարեբախտաբար գոյություն ունի այս փոփոխությունը բացատրող փաստ: Պարզվում է, որ «Հէրեւանը» առաջին անգամ «Երեւան» է կարդացել հենց «Սեբեոսի Պատմության» հայտնաբերող Հովհաննես Շահաթունյանը, որին և հետեւել են «Երեւան» ընթերցվածքը պարունակող մյուս բոլոր ձեռագրերը (մեր Մատենադարանում և այլուր): Շահաթունյանը 1842 թ. հրատարակած իր գրքում «Սեբեոսի Պատմության» հնագույն ձեռագրից (№ 2639) քաղել է մեզ հետաքրքրող հատվածը, սակայն փոխանակ տպագրելու ձեռք գրում գտնվող «Հէրեւան» ձեռք տպագրել է «Երեւան»²⁴: Նա հավանաբար կարծել է, թե Երեւանի անունը VII դ. գրվել է «Հէրեւան»: Բայց որ դա այդպես չէ՝ երևում է «Գիրք թղթոցից», որտեղ մեզ հետաքրքրող տեղանունը գրված է ճիշտ այնպես, ինչպես գրում ենք այսօր. «Երեւան»²⁵: Այսպիսով՝ հենց Սեբեոսի ապրած տարիներին գրված մի փաստաթուղթ նույնպես գալիս է մեզ թելադրելու, որ «Հէրեւանի» մեջ պետք է որոնել ոչ թե Երեւանի, այլ՝ մեկ այլ վայրի անուն: Այդ, ինչպես ասվեց, «Հեր» անունն է:

Ըստ այսմ՝ «Սեբեոսի Պատմության» նախնական բնագիրը մենք վերծանում ենք այսպես. «Նւ եկին ժողովեցան ի Հէր և անդ մարտեան ընդ բերդին և ոչ կարացին առնուլ»: Մեր ընդգծած «Հեր և անդը» VII դ. գրվում էր առանց բառանշատման, այսպես «Հէրեւանի»: Հետագա գրիչները այն կարդացել են «Հէրեւան»:

Այսպիսի մի շփոթ՝ «Սեբեոսի Պատմության» մեզ հասած տեքստն ընդօրինակող գրչի համար բոլորովին անսովոր չէ: Նա գրեթե նույն եղանակով է աղավաղել նաև «Երան» տեղանունը: Սեբեոսը գրել է «Նւան կաթողիկոս», իսկ գրիչը կարդացել է «էր անդ կաթողիկոս»²⁶, այսինքն՝ «Երանը» դարձել է «էր Անի», ինչպես որ «Հէր և անդը» դարձել է «Հէրեւան»:

²⁴ Հ. Շահաթունյան, Ստորագրություն կաթողիկէ էջմիածնի և հինգ զաւոռացն Արարատայ, հ. Բ, էջմիածին, 1842, էջ 134: Հետաքրքիր է, որ Մ. Բրոսսեն, ի տարբերություն Շահաթունյանի, հատվածը ֆրանսերեն վերապատմելիս տպագրել է ոչ թե «Երեւան», այլ՝ Ilérivan (տե՛ս M. Brosset, Rapports, էջ 53):

²⁵ «Գիրք Երեւանայ» (Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 151):

²⁶ Սեղ, էջ 29:

Նման մի շփոթի օրինակ է նաև «Հարև» անվան շփոթը: Սերբոսի հիշատակած այս տեղանունը գրիչը կարդացել է «Հար և», այսինքն՝ տեղանվան վերջին տառն անջատել է անունից և ընկալել է որպես շաղկապ, ինչպես որ «Հէր և անդի» վերջին «դ» տառը կարդացել է դարձյալ որպես «և» շաղկապ: Այս օրինակները կարելի է շարունակել, բայց, կարծում ենք, բերվածն էլ բավական է՝ պատկերացնելու համար, թե ինչպես կարող էր Սերբոսի գրած «Հէր և անդը» դառնալ «Հէրևան»:

ДРЕВНЕЙШЕЕ УПОМИНАНИЕ О КРЕПОСТИ «ЕРЕВАН»

Г. В. АБГАРЯН
Доктор филологических наук

Резюме

Древнейшим упоминанием о крепости Ереван принято считать сведение Себеоса (VII в.). Однако некоторые ученые предполагают, что название «Ереван» является искажением наименований «Ареставан» (Т. Авдалбегян) или «Гераван» (А. Манандян).

Детальное изучение интересующего нас источника и древнейших списков Себеоса приводит автора данной статьи к выводу, что в первоначальном тексте «Истории Себеоса» вместо названия «Ереван» стояли слова: «Հէր և անդ» («Гер ев анд» = «Гер и там»). Таким образом, утверждается мнение А. Манандяна о том, что Себеос имел в виду не Ереванскую крепость, а крепость Гера.